

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կաթաղին

Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ «ՍԵՒ ՀՈՂԵՐ»Ը
ԵՒ «ՍՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՍԿԱՑ Ի ՀԱՅՍ»Ը

(Շար. Բազմավեկ 1973, Բ. 1, Էջ 107-122)


3.- ՍԵՒ ՀՈՂԵՐԸ

Քնարական ու պատմական տարրերով իրարու զուգորդուած՝ երկրորդ մեծ փորձն է Դուրեանին, բեմին կենդանութիւն տալու մտահոգութեամբ: Հազիւ իր 17 տարեկանը բոլորած կամ ոչ (ըստ ծննդեան թուականի տարբերութեան) հեղինակած է զայն (1868):

Դուրեան երեք տարի ետք՝ 1871ի Մարտ 6ին՝ հրապարակ կուլայ որպէս Թատերագիր մը, մեծատառ ազգերու վրայ հսկայացած դէմքով: Տասնինէն-քսան տարեկան է Պետրոս Դուրեան՝ բեմադրութեան տարին: Ժամանակին նշանաւորները որպէս դերասան-դերասանուհի (օր. Հրաչեայ, Աստղիկ, Վ. Գարապաշեան, Մաղաքեան, Ս. Պէնկեան, Տ. Թոսպաղեան) պատանիի մը դործին վրայ ինկած են, իբրեւ մէկու մը՝ որ բեմին մեծագոյն վարպետն ըլլար: Կը կարծէք թէ՝ այս եղելութիւնը նշանակութենէ զո՞րկ ըլլայ. ընդհակառակն ապացոյց մը՝ թէ «Հանճարեղ» տղու մը հետ է իրենց աշխատանքը, զոր գիտակցութեամբ յանձն առած են գլուխ հանել: Ու հեղինակը անկիւն մը քաշուած, իր ամչկոտութեանը մէջ ծրարուած, արդիւնքին կը սպասէ: Կրնան սուլել, կրնան ծափահարել: Երբեք սուլուած ըլլալու մասին խօսուած չէ, բայց անոր հակառակէն՝ ներկայացման ընթացքին յաճախակի ծափահարուած է եւ բռնի բեմ հանուած համեստ, փառքէ փախչող այդ պատանին:

«Սեւ հողեր»ը ձգտումնաւոր դրականութիւն մը կը հետապնդէ. հիմնական գաղափարը հայրենիքի ծառայութիւնն է, անոր սէրը, որ հայ անհատին վրայ կը ծանրանայ, հակադրուած անձնական սիրոյ եւ հանգստին կամ թուլութեան ու փառքին՝ որ կը մղէ մատնու-

1. Ազգը հրատարակուած է «Մանգոմէի էֆեհար»ի մէջ (Մարտ 5):



1904-751

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլէմկեան Հիմնարկութեան» նպաստով
Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»

թեան: Նպատակն է ուրեմն դնել շեշտը հանրական դարձած մտայնութեան մը, որ դժբախտ իրականութիւնը եղած է դարերու հոլովոյթին մէջ: Հայը մատնիչ իր հայրենիքին: Այս գաղափարը խոտելի դարձնելու համար է որ ձեռնարկուած է դործին: Շեշտը զոր կը դարնէ յաճախ, եւ նպատակը՝ որու կը ձգտի, բացայայտ են դործին մէջ:

Յղացումին խորքը պատմական է, առանց հարազատ դրուագի մը պատկանելու, առանց պատմական ճշգրիտ անձերու արձագանդն ըլլալու. յերկրուածքը ծնունդ է լոկ երեւակայութեան, խորհուած ու պատկերացուած որպէս պատմական: Միակ պատմականը Լէնկ-թիմուրի անձն է, եւ իր ասպատակութիւնը, որ աւերիչ արշաւանքով մը կոխտեց Հայաստանի բարձրաւանդակը եւ Փոքր Ասիան: Սեբաստիա այս ձեւով կը մտնէ ընդհանուր պատմական շրջանին մէջ: Եւ արդէն, նման ողբերգութեան մը կամ «պատմական տրամի» մէջ ճիշտ չէ ճշգրտօրէն կապուիլ բանասիրութեան տուեալներուն, վնասելով դրական ազատութեան եւ երեւակայութեան կատարելիք դերին: Ինչպէս պատմական վէպը, նոյնպէս պատմական տրամը կրնան ներշնչուիլ պատմութենէն, բայց ոչ կաշկանդուիլ անուններու, դէպքերու անհերքելի ճշգրտութիւններով:

Դուրեան օգտագործած է իր ազատութիւնը, եւ փրկած ուղին մարդոց եւ ժամանակին, եւ մանաւանդ հայկականութիւնը կտորին: Վերաքննութեանս ընթացքին «տղայական» ընոյթը կը լարէր ուշադրութիւնս, վեր հանելու այն միամտութիւնները, մտածութիւնները, ձեւերը, արուեստի խեղճութիւնները, եւ փնտռելու մանաւանդ այն անբնականութիւնները՝ որ բեմի օրէնքներուն հակառակ ըլլային, մեղանշումներ՝ որոնք վտանգեն խաղը ոտքի վրայ բռնելու: Անկեղծ պէտք եմ ըլլալ, որ այս անտեղութիւնները շեշտուած ձեւով մը չէին պոռար 17 տարեկան տղու մը դործին մէջ, երբ կը խորհիմ որ հասուն հասակը թեւակոխած եւ հեղինակ կարծուած շատ շատերու քով անոնք անխուսափելիօրէն կան: Մտադրութիւնս առարկայակամ ըլլալ է եւ նկատել դործը ինքնիր մէջ, իր լաւ, յաջող ու տկար կողմերով հանդերձ:

Արարները. Առաջին արարը պատրաստութիւն մըն է գլխաւոր նիւթին՝ Բ. եւ Գ. արարներուն, բայց ինքնին ամբողջութիւն մը: Մուտք մըն է բնական, տալու համար, պատերազմին ստեղծած աղէտին ահաւոր թշուառութիւնը ընտանիքներու համար: Իշխանուհի մը [Նաղենիկ] սուգի մէջ է, վասնզի ամուսինը [Վաղինակ], զօրապետը բանակին, երկար տարիներէ ի վեր բացակայ ըլլալուն՝ մեռած մը համարուած է արդէն: Իրեն հետ կու լայ իր անչափահաս միակ աղջիկը [Վարդանոյշ], որ ծնած է Վաղինակի ճակատ մեկնելէն ետք: Նաղենիկ դուստրն է Սեբաստիոյ իշխանին [Նորայր], որ նոյնպէս

դարձած չէ պատերազմէն, դերի բռնուած ըլլալով Եգիպտոս: Եւ ահա կոյր զինուոր մը ափ կ'առնէ Նաղենիկի տան առջեւ. Վաղինակն է որ Հազարացիներու դէմ պատերազմը յաղթելէն ետք՝ ինկած է քանի մը ընկերներով թշնամիին ձեռքը, որ փոխանակ սպաննելու զինքը՝ կուրցուցած է: Կը ճանչնան զիրար, համբոյր եւ գրկախառնում: Քիչ վերջ՝ կը յայտնուի Նորայր իշխանը եւս, որ հինգ վեց տարի ետք՝ կը դառնայ նմանապէս հայրենիք. յուզում եւ ընտանեկան միութեան երջանիկ պահ մը, որուն իսկոյն կը խառնուի դառնութիւն. վասն զի կը լսուի դուրսը՝ որ Լէնկթիմուր մօտեցած է Սեբաստիոյ: Այս բոլորին մէջ ոչինչ կայ իբր տղայական մտածութիւն, կամ իբր ներկայացում: Թերութիւնը ուրիշ տեղ փնտռելու է:

Բ. արարը դիմադրութեան վիճակն է. փոքր Սեբաստիա մը հըրկայ եւ անագորոյն Լէնկթիմուրի դէմ ճակատած. Նորայր իշխանը կը յանձնէ իր Վաչէ զօրավարին պաշտպանութիւնը քաղաքին պարիսպներուն: Այս արարը աւելի շարժում ունի. աղբասիրութեան հետ աղբուրացութիւնը, հայրենասիրութեան հետ մատնութիւնը հանուած են դէմ դէմի: Վաչէ եսամու մ'է, թոյլ եւ վատ զինուոր, կը խորհի մատնել քաղաքը՝ փոխանակ պաշտպանելու, համոզուած՝ թէ ո'րեւէ պաշտպանողական դիմադրութիւն՝ ապարդիւն է ահաւոր հոսանքին դէմ, որ տապալելով երկիրներ եւ աղբեր՝ առաջ կ'երթայ բովանդակ Փոքր Ասիոյ մէջ: Միւս կողմէն կոյր Վաղինակը եւ Նորայր՝ հայրենասիրութիւնը կը ներկայացնեն: Լէնկթիմուր եւ իր զօրավարը կ'օգտագործեն մատնիչ Վաչէն, յետոյ պատժելու եւ շղթայելու համար զայն՝ իբրեւ անհաւատարիմ մը իր աղբին. դեղեցիկ է Վաչէի դատապարտութեան տեսարանը (Բ.Ը):

Գ. արարը, տրամին էական գաղափարին մէջ կը մտնէ. հայրենի աշխարհը, աւերակ ու մոխիր, դարձած է «սեւ հող», ուր կը շրջին թշուառներ եւ դիզուած դիակներ: Հոն ինկած է նաեւ որդին Վաչէի եւ կինը՝ Երանեակ, որ կ'ողբայ եւ կ'անիծէ անունն ու յիշատակը իր ամուսինին՝ պատճառ աղբային աղէտին: Աւերակներու վրայ կը հանդիպին իրարու Վաղինակ եւ Նաղենիկ եւ շղթայակապ Նորայր իշխանը, որ ազատ կ'արձակուի Լէնկթիմուրէն՝ իր հայրենիքին համար կռուած ըլլալուն համար. հակապատկերը Վաչէի:

Վերջապառն ալլաբանական պատկեր մըն է. աւերակներու վրայ լուսնկայ դիչերային տեսարան մը, ուր Հայաստան շղթայի զարնուած է եւ վրան կը հսկէ քշուառութիւնը, տապալը գլխուն բռնած եւ սեւ դրօշ մ'ալ ձեռքը: Շիրիմներ հոս ու հոն, սուգ եւ ողբ ամէն կողմէ: Թշուառութիւնը եւ Ամբիութիւնը ճիւղներու պէս կ'անիծեն Հայաստանը՝ դուժելով անոր բնաջնջումը: Սէրը եւ Յոյսը՝ ուրիշ այլաբանական անձնաւորութիւններ՝ որ ընդհակառակն կը քաջաբերեն զինքը եւ կը բացատրեն թէ ինչո՞ւ ինկած է ահաւոր թշուառութեան

մէջ. անկումին միակ պատճառը մատնութիւնն ու անմիաբանութիւնն է. սէրը երբ միացնէ հոգիները՝ Հայաստան պիտի ըլլայ անյաղթելի եւ միշտ զօրաւոր: Յոյսը կ'արեւոյնէ լքուած հայրենիքը եւ ցոյց կու տայ վերականգնումի ճամբան:

«Տարազիր ի Սիպերիա»-ի մէջ արդէն Դուրեան յայտնուած էր սիրահար ու հակամէտ ալլաբանական արտայայտութեան, որ դասականներէն մնացած հետք մըն է գրականութեան եւ նկարչութեան մէջ. յիշենք Վոլթերի «Նախանձ»ը, Թիէրոլոյի «Արդարութիւն եւ խաղաղութիւն»ը, հին բանաստեղծներու քով յաճախ ալլաբանօրէն պատկերացուած «Վրէժխնդրութիւնը». դասական գրականութեան մէջ սովորական այս երեւոյթը ռոմանթիքներն ալ երբեմն դործածեցին: Խորհրդապաշտներուն գրութիւնը՝ իրերուն ետին ուրիշ միտք, զգացում եւ պատկեր տեսնելու՝ դասական այս ալլաբանութեան հետ չի գոլորթանար: Դուրեան սիրող մըն է այս ձևին եւ երկրորդ անգամն է որ դասականներու մտայնութեան եւ արուեստին կապուած՝ կ'անձնաւորէ վերացական գոյացութիւնները: Բանաստեղծական եղանակ մըն է, նկարագրելու վեր պատկերացնելու գաղափարը, աւելի ազդեցիկ եւ աւելի տպաւորիչ դարձնելու համար:

«Աւել հոգեր» տրամբ մտքով ապէս սուգի եւ ցաւի պատկերացում է, ունի գործող անձերու ետեւ՝ նաեւ անձնաւորեալ գաղափարներու ներգործութիւնը մտքերու վրայ. խաղին մէջ տիրական գաղափարը մատնութիւնն է, Վաչէի մէջ ներկայացուած, ինչպէս հայրենասիրութիւնը՝ միւսներուն մէջ. բայց այդ անուղղակի պատկերացումը թերեւս այնքան խօսուն, այնքան տպաւորիչ չէր. ուստի բանաստեղծութեան կը դիմէ, ուրիշ եղանակով մը նոյնը շեշտելու համար. տիրական գաղափարին՝ Անմիաբանութեան ուժեղացումը կը կատարուի հանելով դայն դահի վրայ: Ատիկա ճիշտ մըն է պատճառ բոլոր աղէտներու (թշուառութիւններու, մահերու, սուգերու): Անմիաբանութեան ծնունդն է ստրկութիւն, կործանում եւ աւերակ: Բանաստեղծին նպատակն է կանգնել հայրենիքը՝ յոյսին ճառագայթով եւ սիրոյ ջերմութեամբ: Ալլաբանական պատկերը որ իր վերջաւորութեան ուժգին շեշտ մը կը ստանայ, կարծէք յաղթանակովը Անմիաբանութեան (Թշուառութեան սպառնալից յարձակումով եւ գերեզմաններէն ելած ստուերներով), հուսկ տեղի կու տայ Հայաստանի Ոգին՝ որ կը պաղատի խորտակելու իր շղթաները, եւ կանգնելու ազատ. այս հրաշքը կը կատարեն՝ Յոյսը, որ «գերեզմանին ցուրտ դրան առջեւ իսկ՝ թաղին եւ գաղաղին կը ժպտի», եւ Սէրը՝ որ կը միացնէ սրտերը եղբայրութեան մէջ:

Դիւտաւոր նորութիւնը. — Դուրեանի թատրերը իր մէջ գաղափարական մը կը բերէ. դասականներու ըմբռնումով դուցէ,

բայց նաեւ ձեւով մը՝ որ նոր է: Եւ այս խաղը աղբաւ է ժամանակին, յիսուն տարի ետքը դադարելու համար իր տպաւորիչ ազդեցութենէն, եւ նկատուելու տափակութիւն մը: Սակայն կը համարիմ թէ իր օրով նոր էր եւ ոչ ոք այդպէս բեմադրած էր հայրենիքի սէրը. ոչ մէկը զինքը կանխողներէն եւ ոչ ալ ժամանակակիցներէն:

Տաղանդաւոր «տղու» մը դործ է անտարակոյս Սեւ հողերը, ուր ըստ բաւականի ոյժը, մտածութիւնը փրկուած է, բայց ոչ ուժգնօրէն. մի' մոռնաք որ կը գտնուիք տասնեօթը տարեկան պատանիի մը ստեղծագործութեան դիմաց: Եւ սակայն միտք մը կայ հոն, ամբողջութեան մը մարմին տուող գեղարուեստասէր միտք մը, որ գիտէ նաեւ ստեղծել հակադրութիւններ: Պատժուած մատնիչը, շղթայաւոր եւ անիծուած իր մեքենայներէն եւ ազդակիցներէն, մեռնիլ կ'ուզէ, բայց անխառն եւ բռնի պիտի ապրի աւերակներու եւ դիակներու մէջ՝ լսելու իր կատարած աւերին ահաւորութիւնը, տանջուելու հոգիով, փնտռելով գերեզման մը: Այս կէտը «ռոմանթիզմ»էն կու գայ անշուշտ, զգացումի եւ մտքի պայքարին ծնունդ, հակադրութիւն մը բարիին եւ չարին, սիրոյ եւ ատելութեան: Ոչ ոք պէտք է մեռնէ զինքը, որպէսզի միշտ տանջուի: Դուրեան կը գտնէ հուսկ զիւտը, վախճան մը տալու այդ երեւոյթին. մատնիչը կը մեռնի բեմին վրայ շանթահար եղած. անհրաժեշտ էր դուցէ այս մահը, դեռ դասական շունչ կրող Դուրեանին համար, որպէսզի տրամի գաղափարը ամբողջանար. չարը պէտք էր պատժուեր ձեւով մը. յունական «deus ex machina»ն հոս ալ կարծես կը դործէ, եւ կու տայ լուծումը. դուրսէն կու գայ հարուածը չարագործին՝ որ այլեւս «Բան»ին դործածութիւնը կորսնցուցած, հակառակ շղթայակապ ըլլալուն՝ մոլեղնօրէն կը յարձակի կնոջը՝ Երանեակին վրայ, որովհետեւ սա չի դադրիր իր անվերջ անէծքները թափելէն: Երկնքի վրէժխնդրութիւնը չ'ուշանար. դէ՞պք, փոթորիկի մը պահուն պատահած իրական արկած, չէ բացատրուած խաղին մէջ. «երկնային վրէժխնդրութիւն», կ'ըսուի պարզապէս, որ կը նշանակէ բնական վեր միջամտութիւն մը եւ լուծում մը, որպէսզի վերջանայ, ալլապէս անլուծելի տրամբ:

Թերեւս անբնական դրած են ոմանք այս շանթահար մահը, ու տղայական գիւտ համարած, առանց նկատելու ատոր գոյութիւնը հոն իրրեւ դասականէն մնացած երեւոյթ: Դասական եւ ռոմանթիք տարբեր յաճախ միացած են իր մէջ՝ իր սկզբնական թատրերկներուն մէջ, երեւոյթ մը՝ որ զարմանք պատճառելու չէ. տակաւին հիներուն ազդեցութիւնը չէր թօթափած բոլորովին, եւ որոնք քանի մը պատմական ողբերգութիւններու մէջ եւս պիտի ապրին, մինչեւ որ ինչայ իրապաշտ թատրոնին զիրկը:

Տպաւորութիւններ. — Ձեռք ժխտեր: Գաղափարներու աղդեցութիւն կամ կրկնութիւն՝ նմանապէս հասկնալի են դարուն մտայնութեամբ: Այսպէս «deiste»ներու իմաստասիրութեան հետքեր. «անդգայ, անգութ երկինք»ի դէմ բողոքը, դանդաղ Աստուծոյ մը դէմ՝ որ չի նախախնամեր», «Հայեր երկնից երեսը յոյս չփնտռենք, մեր յոյսը թող ըլլայ մեր սիրտը եւ մեր սուրը» (Բ. դ.): Նորայր իշխանին բերանը դրուած այդ խօսքը՝ կը հեռանայ նախնիքներու երկրից հաւատքէն: Նոյն արտայայտութիւնը Նաղենիկի մէջ, անվայել հայ քրիստոնեայ կնոջ մը (Գ. դ.): Յոռետես փիլիսոփայութենէն եկած հետքեր ալ կան Դուրեանին քով, որոնք իւրացուած չեն դուցէ եւ կ'աղարտեն իր մաքուր փիլիսոփայութիւնը: Վաչէի բերնին մէջ, որ մատնիչ ողին կ'անձնաւորէ, թերեւս կ'արդարանան այն գաղափարները՝ որ «հայրենիքը» կը նկատեն պատճառ բոլոր աղէտներու, «պատերազմի դաշտ, նախճիր եւ արիւն», ինչպէս յետոյ պիտի ըսէ Ա. Իսահակեան, Շոպէնհաուերի աղդեցութեան տակ, նոյն ընկերային իմաստասիրութենէն առաջ եկած, որոնք անձնական մտքի ծնունդներ չեն Դուրեանի, ինչպէս հարադատ չէ «Տրտունջ»ի վերջին տողին տէխտակամ վերջաբանը. «Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն»: Վոլթէր մը եւ Նիցշէ մը կայ այս մտայնութեանց ետին, այնքան տարածուած իմացականօրէն անկազմ երիտասարդութեան մէջ, ազատախոհական ձգտումներու վերարկուին տակ:

Ողբերգութեան մէջ մի արարուածի ընդհանուր եւ վարիչ դադափարին ընդլայնումը կեդրոնացնելու դրութիւնը՝ Հիւկոյեան է. այսպէս Դուրեանի այս դործին Ա. արարը կը կրէ «Արշաւանք» տիտղոսը, երկրորդը՝ «Մատնութիւն», երրորդը «Սեւ հողեր»: Նոյնը կը գտնենք Էռնանի-ի մէջ, որուն հինգ արարները հիմնական բաժանումներ կը կրեն ամբողջական նիւթին. Թագաւորը (Ա. արարին մէջ), Պանտիդը (Բ.), Ծերունիք (Գ.), Դամբարան (Դ.), Հարսանիք (Ե.): Յայտնի է հոս Դուրեանին կողմէ ընդհանուր ձգտում մը՝ շարադրութեան բանաձեւումը յարմարեցնելու Հիւկոյի արտայայտութեան դէպ արտաքին եղանակին: Նոյնպէս էր Շիլլերի ինչ ինչ դործերուն շարադրութեան ձեւն ալ:

Պատմական շրջանակ եւ հեղինակին նպատակը

«Սեւ հողեր»ը իբր պատմական ողբերգութիւն, պէտք էր ունենալ պատմական շրջանակ մը, դէպ անուններու պատրանքովը, որ ստեղծէր այդ միջավայրը: Լէնկթիմուրի անունը, որուն սարսափը կ'իշխէ խաղին մէջ, բնականաբար պատմութեան ծանօթ ժամանակ-

ներուն կը տանի մեզ: Հոն համանշանակաբար կը յիշուին իբր Հայաստանի աւերիչներ՝ Հաղարացիները, Թաթարները², Եգիպտացիները (Ա. ե.) եւ կը կոչուին «երկնավրէժ հրէշներ», որոնք անխնայ հարուածեցին մեր աշխարհը՝ տարբեր շրջաններու մէջ: Լէնկթիմուրի արշաւանքը կը նկարագրուի անուղղակի (Բ. դ. է. ը.), եւ որուն ներկայութիւնը կը դառնայ զգալի:

Նոյնիսկ եթէ պատմական վրիպումով մը ուղուի մեղադրել Դուրեանը, պատմական ողբերգութեան նկարագիրը ոչ մէկ կերպով կ'աղարտի. արտաքին կամ երկրորդական թերութիւններ չեն դաշիր աւոր էստարրին, յորինուածքին, գործողութեան եւ անձերուն: Դուրեան իր չափին անձկութեան մէջ փրկած է, որքան կը համարիմ, նպատակը, եւ կրցած է տալ նշանակութիւն մը գործին. հետեւաբար անճրկած կամ ձախողած մը չէ իր ամբողջութեան մէջ: Տրամը դըրուած, կ'երեւի, յատկապէս պօզալի դարձնելու համար մատնութիւնը. Հայաստան ինկած է, աւերակներու կոյտ մըն է. որովհետեւ «Հայոց մէջ մատնիչներ կան... մատնութեամբ Հայերը զիրար կենսազրաւ ընելէ ետքը՝ եթէ միայն Հայ մը մնայ, ա'յն ալ ինքզինքը պիտի մատնէ, որպէսզի Հայ եմ ըսելով աշխարհի վրայ պարծենայ... Հայերն ի քուն են, իսկ մատնիչներն՝ արթուն» (Ա. ե.): Վերջին հայուն անգամ մատնութեան ահուկի միտքը «Տարագիր ի Սիպերիա»ի մէջ եւս յայտնած էր արդէն, դրեթէ նման ձեւով. կը զգացուի հետեւաբար նոյն դրչին դիտումնաւոր ձգտումը: Ատկէ անբաժան է ազգային միութեան դէմ դաւաճանումը, որ դուռ բացած է աղէտներու բոլոր ժամանակներու համար: Մատնիչի տիպարը՝ Վաչէն, երիտասարդ զօրավար մըն է, որուն՝ Նորայր իշխանը յանձնած է պատասխանատուութիւնը զօրքին եւ քաղքին պաշտպանութեան: Բայց ան վատ մըն է, եսասէր մը քան թէ հայրենասէր. անոր մէջ ազնուա-

2. Մէկ գծի վրայ յիշուած ասոնք Դուրեանէն՝ կը թուին չհամապատասխանել պատմական ճշգրտութեան: Եթէ Լէնկթիմուրի օրով, 1400ի սկիզբները եղած արշաւանքներու վրայ է խօսքը, չէ կարելի միաժամանակ կատարուած համարիլ զայն Եգիպտացիներէ, Թաթարներէ եւ Հաղարացիներէ (ինչպէս կը թուի ըլլալ միտքը բնադրին, որովհետեւ ներկայ դէմքով կ'արտայայտուի). ասոնք իբրեւ հեռու են ժամանակով: Հաղարացիք արարն է, որուն արշաւանքը կանուխ շրջանի մը կը պատկանի. Եգիպտացիները՝ Եգիպտոսի Մամուլեքներն են, որոնք անշուշտ Եգիպտոսի Թուրքերն էին, տէր դարձած հոն ԺԳ. դարու կէսէն մինչեւ ԺՁ. դարու սկիզբները: Թուրք-Մոնղոլ ցեղերու միութենէն եկած են Թաթարները՝ որ ձինկիդ իսանին (1167-1227) առաջին հրոսակումբերը կազմեցին, եւ յետոյ Լէնկթիմուրի ձեռքին տակ (1336-1405) վերակազմուեցաւ Բ. Մոնղոլական կայսրութիւնը: Այստեղ հետեւաբար միայն Թաթարները յիշուելու էին: Սակայն Դուրեանի միտքը կրնայ մեկնուիլ նաեւ ընդհանուր անարկով մը Հայաստանի անցեալ պատմութեան, զոհ եղած միշտ վերոյիշեալ բոլոր արշաւող ցեղերու:

կան եւ նուիրական ձգտումները երջանկութեան, անդենականի՝ տեղիք տուած են թուրուքեան, հաճոյքի եւ անձնական փառքի (Բ. ա.) : Զինուոր մը միայն կ'ընդլզի մատնութեան դաղափարին դէմ, առաջարկուած զօրավարէն. այդ զինուորին ձայնը՝ հայրենիքին ձայնն է, ողջ, մաքուր եւ դաղափարական նուիրումի ոգիով :

Դուրեան աւելի եւս կը սաստկացնէ իր դոյները. մատնիչը աւելի է նաեւ թշնամիին, անոր՝ որուն ծառայութիւն մատուցած է. Լէնկթիմուրի մէջ կը յայտնուի ողջամիտը, մարդը ճանչցող՝ խորագէտ բռնաւորը, որ օգտադործելէ ետք դաւաճանը, կ'անցնի դայն պատժելու : Այն որ իր աղբը մատնեց, կը խորհի, աշխարհակալը, «անշուշտ օտար աղբ մ'ալ կը մատնէ» (Բ. դ.) : Այս դաղափարը, զոր պատանի Դուրեան այնքան պարզութեամբ եւ խոր համոզումով կը շնչէ, պատմութեան տուած դասն է որ հին դարերէն կու գայ : Վաչէի գանգատին դէմ՝ թէ չղթանե՞րն են իր վարձատրութիւնը — Լէնկթիմուրի մէջ բանաստեղծը կ'ընդլայնէ իր տեսութիւնը, մատնութիւնը համարելով դատաւարտելի բովանդակ աշխարհի դատաստանով : Մահուան արժանի է այն՝ որ իր շահուն համար եղբայրներուն կեանքը կը վտանգէ, այն՝ որ իր կեանքը կը նախադասէ քան հայրենիքին ազատութիւնը՝ հրէջ մըն է, որուն մէջ մարած է կայծը հայրենասիրութեան : Դուրեան դեռ վերաւորիչ բացատրութիւն մ'ալ ունի, քանի մը անգամ կրկնուած ողբերգութեան մէջ. «այսչափ աղբեր նուաճեցի, կ'ըսէ աշխարհակալը, եւ չտեսայ Հայէն զատ ուրիշ աղբ մը՝ որուն մէջ գտնուէին ուրացող մատնիչներ» (Բ. ը.) : Խթանող, թմրութիւնները ցնցող ուժեղ արտայայտութիւն մը, զոր բանաստեղծը դիմամբ դործածած է. եւ իբր հետեւանք կ'աւելցնէ նաեւ սա՝ թէ «Դուք շուտ կը կործանիք Հայեր», որովհետեւ «անմիաբան էք» (անդ) : Զգտումնաւոր դրականութիւն մը՝ որ բեմին միջոցաւ ուղղուած է մեր ժողովուրդին. թատերադիրներ ծաւալած են դայն բացայայտօրէն, պայծառ եղանակով, ուղղակի, ճակատաբաց դարնելով մեր թշուառութենէն եւ տառապանքէն կոտորացող վէրքին : Մատնիչ Վաչէն թշնամիէն պատժուած, չղթայակալ իր մահը կը փնտռէ տրամին մէջ, իր դաւաճանութեամբ կարմրցած հայրենի հողին վերայ թափառելով :

«Քաջարանց» եւ «Վատարանց» դասական տիպարները հոս ալ կ'երեւին. Վաչէին դէմ Նորայր, Վաղինակ եւ Նոյնիսկ Նաղենիկ (դիւցազնուհի), որոնք կեանքը դոհելու դաղափարէն կը տարուին գերազանցօրէն. քաջ են եւ մաքուր հայրենասէր, ապացուցնելու համար բանաստեղծ-հեղինակին միւս վճիռը թէ՛ «եթէ Հայերը իրենց քաջութեանը չափ միութիւն ալ ունենային, Լանկթիմուր չպիտի համարձակէր իրենց երկրին մէջ ոտք կոխելու անգամ...» (Բ. ե.) :

Խորագիրը տրամին. — «Սեւ հողեր» (ընդհանուր խորագիր Գ. ա-բարին) բովանդակ խաղին պարունակութեան հետ կապուած է եւ է գլխաւոր տիտղոսը. հայրենի աշխարհը եւ յատկապէս Սեբաստիոյ դաւառը ըստ տրամին՝ այրած, արիւնով թաթաւուն, քանդուած, դիակներու կոյտերով լի, սեւ, դժբախտ հող մըն է դարձած Լէնկթիմուրի հրոսախումբէն : Երկրորդ տիտղոսը՝ «Յետին գիշեր արարատեան» լայն իմաստ մը միայն ունի. Վերջաբանին մէջ ողբը ընդհանրացած է, գրկելով ամբողջ Հայաստանը «այրարատեան աշխարհ» խորհրդական անունով. դէպքը կը պատահի Սեբաստիա, որ մտածուած է իբր մաս հայ աշխարհի՝ բանաստեղծին մտքին մէջ : Պատմական խորքը, ինչպէս «Վարդ եւ Ծուշան»ի, այսպէս հոս, ենթահող մըն է պարզապէս, որպէս ընդհանուր շրջանակի մը ընդգծում, առաջինին մէջ սիրային, երկրորդին մէջ՝ ազգային հոգեբանութիւններ պատկերացնելու : Ասկէ կը հետեւի թէ ինչ եղած է հիմնական առաջադրութիւնը բանաստեղծին՝ ցարդ մեր տեսած կոտորներուն մէջ, խորագրին առաջին մասին հետ կապելով հիմնական դաղափարը եւ երկրորդին հետ՝ երկրորդական, բայց ամբողջացուցիչ պարագան :

Գրական շունչը. — Բան մը՝ որ տիրապէս զգալի է հոս ալ, գրական շունչն է, քնարականութիւնը՝ որ ուղղակի Դուրեանի հոգիէն կու գայ : Սիրող սիրտը միշտ ներկայ է իր գործին մէջ. հոս Նաղենիկ մը՝ իր սիրականին յուշովը երազուն՝ հանգիստ չունի, ո'չ արշալոյսին եւ ո'չ ալ աստեղաղարդ գիշերները. իր սիրոյ առարկան աւելի քաղցր ժպիտ ունի քան այդը, եւ աստղերէն աւելի շողջողուն են անոր կապոյտ աչքերը, որուն սիրտը անհուն դրախտ մըն է, ուր կ'ոստոստէր երբեմն զուարթ թիթեռնիկի մը պէս. մինչ հիմա սգաւոր է, որովհետեւ գերեզման մը կայ երկուքին միջեւ (Ա. ա. բ.) : Այլուր գրական պատկերով երջանկութեան զգացումը կ'արտայայտէ, նմանցուած աշնան պարզ երկնքի մը՝ որ յանկարծ կը պաշարուի թուխ ամպերէ, գրկելով հողին կապոյտին գորովոտ ողջադուրումէն :

«Սեւ ամպերու բանակ մը» գրականօրէն արտայայտիչ ձեւ մ'է Դուրեանի՝ նշանակելու Լէնկթիմուրեան հրոսախումբը, որ կ'արշաւէ, կամ «սուրէ թեւերով կը սլանայ» (Ա. դ.) : Վաչէ, որ անիծուած մըն է այլեւս եւ իր հալածիչները կը գտնէ ամէն տեղ, առանց շնչելու փոքր ազատութիւն մ'իսկ կեանքի՝ բանաստեղծէն պատկերացուած է որպէս «մրրկէ մղուած սեւ ամպ մը» (գրեթէ նոյն պատկերը գործածելով) առաջնորդուած իր քայլերէն հոն՝ ուր կը մղէ Հայաստանի վրէժխնդիր ստուերը (Գ. բ.) : Բնութեան այլադան տարրեր, քընքուշ կամ ուժեղ եւ սարսաղազեցիկ, կը բեղնաւորեն միշտ իր պատկերները՝ համաձայն վայրկեանին կամ ապրումին : Ատիկա բան մըն է, որմէ անկախ Դուրեան մը մտածել անկարելի է : Աւերակներու եւ

դիակներու հետ ապրող շղթայակալ անիծուածի մը դոյութեան պատկերը, ռոմանթիք թատրոնով հասկնալի երեւոյթ, հայկականութեան հետ ներքին դադափարային հակադրութեամբ ներկայացուած, գեղեցիկ է պարզապէս, ծնունդ առած մատաղ պատանիի մը երեւակայութենէն:

«Տրտունջ»-ի բանաստեղծը՝ հոս արդէն երեք տարի առաջ զարմանալի գուգադիպութեամբ մը դադափարի եւ ձեւի, դպրոցականի գրասեղանէն կը կանխէ թրթռացնել զգացական լարերը իր մահամերձ հոգիին: Վաղինակ, կոյր զօրավարը, հայրենասէր եւ աստուածավախ, մխիթարելու համար իր կողակիցը [Նազենիկը], կ'ըսէ. «Եթէ Տէրը մեզի երկրի վրայ այսչափ ցաւ քաշել տուաւ... եթէ սիրոյ զուարճազեղ հովիտն արցունքով լեցուց... անշուշտ մեզ համար յաւիտեական երկինք մը պատրաստած է, ուր մշտնջենաւորապէս պիտի ժպտինք» (Գ. դ.): Այս տողերուն մէջ շատ կանուխէն կը զգանք արդէն արձագանդը դալիք երգին:

Դու որ ճակտիս վարդն եւ բոցն աչերուս
Խըլեցիր, թրթռումս շրթանց, թռչն հոգւոյս,
Ամպ մը տըւիր աչացս, հեւք տըւիր սրտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը կաղմած ես ետքի,
Կեանք մ'անհուն շողի, բոյրի, աղօթքի:

Ցաւին մէջ անգամ ժպիտ, ուրախութիւն փնտռող բանաստեղծը ներկայ է հոս ուրեմն, գրեթէ միեւնոյն բանաձեւերով, թէեւ նուազ ապրած, դեռ նուազ հասուն՝ քան քերթուածին տողերուն մէջ. նոյն սիրտն է որ կը թելադրէ, նոյն կրօնական փիլիսոփայութիւնն է որ կ'ապրի երկու կտորներուն մէջ ալ: Քնարական շեշտի առաւելութիւնը իր քով՝ ժամանակակիցներէն շատերուն վրայ, թատերական բանաստեղծութեան մէջ անշուշտ նկատելի կէտ մըն է:

Բայց գիտենք՝ թէ Դուրեանի տկարութիւնը ընդլայնումի արուեստին մէջ է գլխաւորապէս, որ իր ողբերգութիւնները կը գրկէ լայն ու կատարեալ արտայայտութիւնէ, ապրումներու ամբողջականութենէ, մտքի եւ սրտի կեանքին լիակատար փթթումներէ, մարդկային արարքներու հոգեբանական վերլուծումներէ, մէկ խօսքով՝ դէպքերու յեղաշրջման անթերի ներկայացումէն: Ասկէ է որ բեմին վրայ հանուած կեանքը ո'չ միայն ամբողջական է, այլ նաեւ իրապէս եւ հոգեպէս ապրուած չի թուիր: Դուրեան կը խուսէ կարծէք յաճախ ընդլայնումներէ, համառօտին ձգտելով. բայց այդ խուսափումը կամաւոր ըլլալէ աւելի, անկարողութիւնն է իր ուժերուն, իր մտքին լայնութեան կամ վերլուծական ճիգին զօրութեան: Ասկէ՝

նիւթը որ կը տրուի, հասկնալի իր ամէն մասերով, բնական ու գրաւիչ, յաճախ սիրուն, բայց մեծցած չէ, շունչի երկարութիւն, չունի. բացուած չէ վերջապէս իր տարրերուն լիութեանը մէջ: Շէյքսպիրի եւ Շիլլէրի որ եւ է գործին մէջ այս թերին դոյութիւն չունի, ոչ թէ բեմին պահանջներու գիտակցութենէն պատճառուած, այլ հասունութենէն տաղանդին, որ գտած է այլեւս իր ամուր, կենսունակ ոյժը: Պատանի Դուրեանի մէջ չմոռնալ բնաւ տարիքին հարցը:

4.- ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՍԿԱՑ Ի ՀԱՅՍ

Պատմական ողբերգութիւն մը՝ որ քայլ մը աւելի զարգացում կը նշէ Դուրեան թատերագրին մէջ: Կը թուի որ աւելցած է փորձառութիւնը, աւելցած է նա մանաւանդ ջիղը, արիւնը՝ տարիքին կատարած փոքրիկ ուսումովը նպաստաւորուած: Աւելի լայն է կարծէք հորիզոնը մտքին, աւելի լայն շունչն ալ, որ կ'ընդգրկէ մարդկային կեանքէն բան մ'աւելի: «Հանճարեղ պատանի» որակումէն առանց դիւթուելու մնալ առարկայական անտարբերութեան գծին վրայ՝ պայման է տեսնելու բուն իրականութիւնը, ինչպէս կանխապէս արհամարհանքն ալ ուրիշ անտեղութիւն մը, որմէ ողջմտութիւնը կը խրատէ խուսափիլ:

Պատմական շրջանակը. — Սկզբնաւորութիւնը մեծղի ողբերգութեան պատրանքը կու տայ իսկոյն. երկու թուականներով պատմական շրջանակում մը՝ որ կը գրկէ իրարմէ հեռու ժամանակներ: Սելւոսեան հրոսախումբին առաջնորդ Տուղրիլ՝ 1054ի Մանազկերտի դրաւումէն ետք կը մտնէ Վանանդ: Գազիկ-Աբասեան Կարուց թաղաւորը կը կարծէ խափանել անոր մուտքը իր հողէն ներս, բայց չարաչար պարտուելէն զատ կը կորսնցնէ նաեւ քաջարի Թաթուլ իշխանը, զօրավար իր բանակին: Երկրորդ թուականը (շուրջ տասը տարի ետք) 1064ին Ալփասլանի արշաւանքովը կը սկսի Անիի վրայ: Այս երկու թուականներով բանաստեղծը ստեղծած է երկու անջատ բեմական գործողութիւններ. ներքսպէս եւ քաղաքականապէս կապուած եւ մին միւսին շարունակութիւնն ըլլալուն, ինքն ալ գրականօրէն ուզած է միացնել զանոնք: Երկու շրջաններ են ուրեմն. Տուղրիլի արշաւանքը եւ Ալփասլանի յարձակումը Անիի վրայ: Դուրեան չի յարգեր հոս դասականներու պահանջած ժամանակի միութեան օրէնքը եւ այսպէս կը հեռանայ արդէն անոնցմէ բացայայտօրէն: Թաթուլի դէմքը դիւցազի եւ հայրենասէրի՝ կ'ապրի «երկրորդ թուական»ին Չարմուհի իշխանուհիին մէջ, որ նշանածն էր ու խորագոյն զգացումներով կապուած անոր:

Քաղաքական այս շրջանին պատմականորեն ճշգրիտ դէմք մըն է Բագրատ իշխանը, վարիչ Անիին. բանաստեղծէն յերկրուած են Զարմուհին՝ անոր աղջիկը եւ Ապրսամ՝ հրամանատար Անիի զօրքերուն, եւ ուրիշ երեւակայեալ ու մտացածին անձեր: Սիրային ուժգին կապ մը խելացնոր կերպով չղթալով է սիրտը Ապրսամին՝ հանդէպ Զարմուհի իշխանուհիին, բայց սա չի փոխարիներ երբեք: Անիի անառիկ պարիսպներուն դէմ կանգնած են Պարսիկները իրենց ահազին բաբանը: Բագրատ կոչ ըրած է Անեցիներուն, վարձատրելու այն քաջը՝ որ պիտի յաջողի այրել դայն: Այս պարագան Անիի պաշարման մէջ պատմական չէ. այդ բանը տեղի ունեցած է Մանազկերտի պաշարման մէջ, ուր Ֆրանսացի հերոս մը այրած է հսկայ բաբանը. ասոր կրկնութիւնն է հոս բանաստեղծէն ստեղծուած տեսարանը: Ներելի է ամէն ինչ, կը բաւէ որ դրական ըլլայ արտայայտութիւնը: Լեւոն պատանին, որը հօրէ եւ մօրէ, կը նուիրէ իր անձը՝ հայրենասիրական զգացումէ շարժած եւ կ'այրէ բաբանը, եւ ինքն ալ, չիյնալու համար թշնամիին ձեռքը, բոցին մէջ կը նետէ ինքզինքը: Պատմական է պաշտպանող իշխաններու խմբովին Միջնաբերդ քաջուիլը, թողով պարիսպներէն ներս ապաստանած ժողովուրդը իր ճակատագրին: Պատմական չէ ո՛չ Ապրսամին դէմքը եւ ոչ ալ իր մատնութեան արարքը, նմանապէս պատմական չէ մատնիչ Աղկան պարսիկ իշխանին զինուորական դադտնիքները Հայոց հաղորդելը ի սէր գեղեցիկ Զարմուհիին: Որտեւեղ պարսիկ զօրավարին դերի բռնուիլը նոյնպէս չունի պատմականութիւն. ատոնք բոլորն ալ խառնուրդ երեւակայութեան ծնունդներ են բանաստեղծին: Ողբերգական տրամին վերջը դարձեալ պտուղ է անոր մտքին, եւ իր մանրամասնութեան մէջ համաձայն չի քալեր պատմութեան տուեալներուն հետ: Ըստ պատմութեան՝ Ալիապան յուսահատած Անիի անառիկ պարիսպներուն դիմաց՝ հրաման կու տայ զօրքին՝ վերցնելու պաշարումը եւ ետ դառնալու: Միջնաբերդի մէջ հայ իշխաններուն առանձնացումը (վատ դադափար եւ զինուորական սխալ որոշում, նաեւ պատմութեան համեմատ) պատճառ կ'ըլլայ որ ժողովուրդը ահի դողի մատնուի, խուճապը սկսի պարիսպներէն ներս, եւ իրենց կեանքը ազատելու համար՝ ցրուին դաշտերը, ապապտաններ փնտռելով՝ որպէսզի չիյնան Պարսիկին ձեռքը: Այդ պահուն է որ Ալիապանի վերջամասց զօրքէն զինուոր մը՝ մօր մը դրկէն մանուկ մը յափշտակելով Ալիապանին կը տանի, ապացուցնելու թէ մատնուած է Անին եւ դրոները բացուած են: Այդ պատմական դէպքին մէկ մասը միայն օգտագործած է բանաստեղծը, վերջին եւ ողբերգական մասը, ժողովուրդին խուճապէն պատճառուած դրաւումը Անիին. տրամին մէջ պարսիկ բանակին քաջութեան եւ մատնիչ Ապրսամին կը տրուի յաջողութիւնը պարիսպներէն ներս կատարուած խուժումին:

Նպատակը. — Ինչպէս «Սեւ հողեր»-ու, այսպէս այս տրամին նըպատակը մատնութեամբ վատութիւնը շեշտելն է: Ազնուական նպատակ մը ուրեմն կը շարժէ պատանի թատերադիրը՝ կրթական ճիւղերով. հայր թէեւ օսմանեան ստրկութեան լուծին տակ, բայց ազգային եսասիրութիւն մը, կեանք մը, ինքնութիւն մ'ունենալու վեհանձն ու դադափարային ձգտում կը մշակէ իր հողիէն ներս: Իր հին պատմութիւնը հարուստ է ուշադրաւ դէպքերով, համոզելու համար օրուան հայը՝ թէ իր դոյութիւնը միութեան մէջ է, եւ դարաւոր աւելտին պատճառը մատնութիւններն եղած են միայն: Հոս Ապրսամ, պաշտպանողական բանակին հրամանատարը, կը լքէ Անիի պարիսպները եւ իր գունդով կ'անցնի թշնամիին դիրքերուն մէջ, որովհետեւ Զարմուհի, մերժած էր իր սէրը, եւ Ապրսամ ուղած է այսպէս պատժել դայն եւ անով ամբողջ Հայութիւնը:

Հայուն ատելութիւնը մատնութեան դէմ՝ Տէր Վահրամ քահանային բերնէն կը ժայթքէ անէծքի բոցերով. Անիի աւերակները դարերով պիտի ողբան հայրենիքը, արիւնը պիտի չցամքի, եւ մատնիչը հայուն ճակատագրին պէս պիտի տառապի, դժոխք մը կրելով իր սրտին մէջ: Հայրենասիրութիւնը էպպէս անձնաւորուած է հոս քահանային մէջ, որ աւելի ազգասէր, աւելի լուսաւոր եւ արիական է քան բոլոր իշխանները՝ որ Անիին պաշտպանութիւնը ստանձնած են: Զմայելի է Զարմուհին, բացառիկ հայ կնոջ մը պատկեր, դիւցազնուհի մը, որ աւելի քաջարի, դիմադրական կեցուածք եւ հայրենիքի անկեղծ սէր ունի՝ քան շատերը իշխաններէն. ինքն է որ կը ներշնչէ ողի եւ ինքնապաշտպանութեան ոյժ եւ խորհուրդ, դիւցազնուրէն դիմադրելու մինչեւ վերջին շունչը (Դ. բ.): Անոր բերանը դրած է բանաստեղծը ամէնէն տաճ խօսքերը. «ա՛հ, շատ սքանչելի կը տեսնեմ Հայուն հայրենասիրութիւնը, կը պնդեմ թէ աշխարհի վրայ հայրենասիրութեան կրակով հրահրած պայծառ ճակտէ մը աւելի դեղեցկութիւն չկայ... եւ իր վիրաց արեան հոսումը մէկ ձեռքովը բռնող, եւ միւս ձեռքովը թշնամիին զարնող զինուորին ճգնաժամէն աւելի վսեմ տեսարան մը չկայ»: Տուղրիլ՝ Հայերը երկրիս երեսէն բնաջնջելու սպառնալիքներ կ'որոտայ (Ա. դ.), անդին Թաթուլ Վանանդեցին կ'եռայ, կը դռայ չղթաներու տակ՝ հայրենիքին սիրով. բնաջնջումի դադափարին դէմ հակադրուած է նըւիրումի ողին, ձեռքը սուր՝ կռուելու իր հայրենի հողին համար: Վիթխարի հերոս մը՝ Պարսից բանակին զօրավարներէն մէկը, Որտեւեղ, պարիսպէն նետուած երկաթէ ճանկին մէջ կ'իյնայ. պարսկական յոխորտութիւնը կատղած է, հայուն ձեռքով միամտօրէն գերի ինչալուն համար: Հակապատկեր տեսարան մը՝ Թաթուլի գերութեան, որ հայկական վսեմ հողիին արտայայտութիւնն էր. եթէ հարուածը Թաթուլին է, ազատութիւն չկայ մահէն (Արսուրանի տղուն

դէպքը՝ որ պատմական ալ է)։ Այսպէս թատերադերձը դառնում է ձեւեր, պատկերներ շեշտուած եղանակով մը խօսեցնելու հայրենասիրութիւնը։ Գեղեցիկ է նաեւ վերջին արարին վերջնութեւ տեսիլը, պատահումը Տէր Վահրամին որ կը պաշտպանէ Ժողովուրդը եւ Ապրսամին՝ որ վատորէն կը փնտռէ Ջարմուհին։ Ժողովուրդին կատաղութիւնը ուրացող հայ զօրավարին դէմ՝ պահանջելով հայրենիքին ազատութիւնը եւ ինկած զաւակները (Ե. դ.)։

Կնճիռի հարց. — Դուրեան գիտէ որ կնճիռը ներկայացումին մէջ ամէնէն անհրաժեշտ կէտերէն մէկն է. բայց չի գիտեր ի՞նչպէս կընճռոտել, կամ աւելի ուղիղ պիտի ըլլար ըսել՝ չ'աշխատի կնճիռ ըստեղծելու եւ մանաւանդ բարդելու զայն։ Դասականներու պարզութիւնը, վախճանին արագ ձգտումը՝ դեռ իր վրայ կ'իշխեն, եւ որմէ չէ կրցած ձերբազատիլ։ Կնճիռը կը ստեղծուի, բայց չի մշակուիր, եւ փութով իր լուծումին կը դիմէ։ Այս տրամին մէջ Ջարմուհին է որ կը դառնայ առարկայ այդ կարգի կնճիռի մը՝ որ դպացական է. Ապրսամ եւ Աղկան, հայ մը եւ պարսիկ մը կը սիրեն զայն, կը կռուին անոր սիրոյն համար։ Ապրսամ որ զօրավարն է Հայոց դունդեւրուն պարիսպէն ներս՝ այնքան խելագարօրէն տարուած է Ջարմուհիի գեղեցկութենէն, որ ուրիշ բան չի տեսներ, եւ կ'անտեսէ Անիի ազատութեան հոգը։ Ջարմուհի չի կրնար մոռնալ իր ճշմարիտ սէրը՝ որ եղած է Թաթուլ եւ հիմա, պատերազմի այս աղէտին մէջ, իր հզօրագոյն սէրը՝ հայրենիքն է, եւ հետեւաբար Ապրսամ վատ մըն է իրեն համար, ստորին էակ մը՝ որ արժանի չէ Թաթուլին տեղը բռնելու եւ խռովելու սիրտ մը, նուիրուած դադափարական սիրոյ. ուստի կ'ատէ զայն քան թէ կը սիրէ։ Քանի մը դողունի պատահումներ Ապրսամին՝ Ջարմուհիի հետ, ոչ մէկ դրական արդիւնք կու տան։ Այդ մերժումը կը ստեղծէ Ապրսամին մէջ ծրագիրը ահաւոր վրէժխնդրութեան մը. մատնութեամբ վնասելու հօրը եւ Հայոց, յուսալով խոնարհեցնել անոր հպարտ գեղեցկութիւնը։ Գեղեցիկ է նիւթը, որ առիթ կու տայ ստեղծելու բարդութիւններ. բայց Դուրեան կը մնայ այս չափին մէջ, եւ մահով կը լուծէ կնճիռը. Ապրսամ դէպի Միջնաբերդ վազած ատենը՝ հսկայ փլատակի մը տակ կ'անշընչանայ։

Պարսիկ սիրահարը, թողած պարսկական բանակին շահը, յոյսերով կ'օրօրուի տիրանալու գեղանի հայուհիին, եւ ի սէր անոր կը մատնէ բանակին բոլոր շարժումները դադարի միջոցներով, դրաւոր տեղեկութիւններով։ Բայց այս սէրը դադարի մըն էր Ջարմուհիին համար ալ, ինչպէս էր իշխաններուն եւ հօրը Բագրատին, որոնք կը զարմանան պարսիկի սրտին ազնուութեան եւ հայասիրութեան վերայ, հաղորդելով զինուորական ծրագիրը։ Չէ ընդլայնուած, չէ բաց-

ուած. դէթ անդամ մը՝ հանդիպում մը նկարագրուած ըլլար. առիթ մըն էր ասիկա հեղինակին համար, ստեղծելու նախանձալուզութիւններ Ապրսամի եւ Աղկանի միջեւ, եւ կամ վտանգուէր սէրը, որպէսզի դառնար աւելի հետաքրքրական. ոչինչ այս կարգի ընդլայնումներէն. լուռ սէր մը՝ որ կը վերջանայ, ինչպէս կը սկսի։ Աղկան կը դարնէ ինքզինքը յուսահատութենէն եւ մատնութեան ամօթէն, որովհետեւ իր աչքերը հանդիպած էին Որտեմեղ զօրավարի աչքերուն, շղթայուած եւ առնուած պարիսպէն ներս, եւ անկարող էր իր մեծ դադարիքը յայտնելու։

Բուն կնճիռը, որ կարելի է ըսել թէ՝ թատրոնի ողին է, դոյուլութիւն չունի հոս այս տրամին մէջ, եւ տեսանք թէ ինչպէս անյայտացաւ հաղիւ սկսած։ Աստոր հակառակ բեմը տաք պահելու կարողութիւն մ'ունի Դուրեան. շարժումը, աշխուժութիւնը, դործողութեան թափը, թէեւ առանց բացուելու, կամ ինչպէս ըսինք ծաղկելու եւ մեծնալու, փրկուած են. խաղը լարուած հետաքրքրականութեամբ իր նպատակին կը ձգտի։ Այս ալ արդէն առաւելութիւն մըն է, որ իր վրայ աւելի կը փայլի քան Մ. Պէշիկթաշեանի։

Պատանի Դուրեանի տաղանդը թատրոնին տուած է աւելի լայն կեանք, աւելի շարժում եւ աւելի դարդացում, եւ իրմով նոր շրջանի մէջ մտած է անտարակոյս։ Բեմին կազմը, անձերու հիւսուածքը, դործողութեան ստեղծումը առած է ընդարձակութիւն։ Պէշիկթաշեանի մէջ կին դոյուլութիւն չունէր, հոս ռոմանթիք եւ իրապաշտ ըզդայնութեան պատկերներ կը դժուին, թէեւ սեղմ, թէեւ միշտ զուսպ։ Պէշիկթաշեան դասականի օրէնքներէն ու սահմաններէն անդին չէր անցած, Դուրեան կը խզէ ամէն կապանք եւ նորութիւններու հետանում է։ Անոր Կոռնալը եւ Արշակը օրինակ՝ առաջին յարմարցումն են թատրոնին. ազգային նիւթեր են, ինչպէս միւս երկուքը (Վահան, Վահէ), որոնց մէջ «վատարանց» եւ «քաջարանց»ը յայտնապէս կը դործեն, որոնց մէջ հայրենասիրութիւնը կը կատարէ միակ հիմնական դերը, դպացականը փոխանակուած է բարեկամութեան սիրով կամ զաւակներու ազապատանքով։ Բայց ընդհանուր մթնոլորտը Դուրեանի եւ Պէշիկթաշեանի միշտ նոյն հոգեկան ապրումները կու տան, թէեւ աւելի լայն շունչով, եւ աւելի շարժումով Դուրեանի քով։

Համեմատական մանրամասնութիւններ, շատ հետաքրքրական, համապատկերի մէջ պէտք է առնուին, յատկանշական կէտերու ընդնշումով, շրջանի բոլոր կամ դէթ կարեւոր փորձերուն՝ հասարակաց նկատառման մը մէջ։

Բեմադրական դժուարութիւններ. — Դուրեան այս տրամով տեսարանական փոփոխութիւններ ալ մտցուցած է եւ բեմադրութեան համար նոր պահանջներ։ Չեմ գիտեր թէ զինքը դահացուցած են բե-

